Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Նորաբակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /19 դասաժամ/ թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում/Ձև 1/,մեկ լուսանկար 3*4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

2.Անձը հաստատող փաստաթուղթ,

3.<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,

4.Ինքնակենսագրություն,

5,Այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

6. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,

7. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/,

8.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10,00-ից մինչև 15,00-ն,բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. հոկտեմբերի 15-ին՝ ժամը 14,00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաբակի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ գ.Նորաբակ: Տեղեկությունների համար զանգահարել 077454002 հեռախոսահամարով, էլ հասցե՝ norabak@schools.am.